ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

<< ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-51>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան **«21». 06. 2024թ.**
Ժամը 12:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետի տեղակալ Ա. Թամազյան (հանձնաժողովի նախագահ),

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Մ. Բաբայան (գնահատող անդամ),

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյանին (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Շ. Հարությունյան (գնահատող անդամ): ՀՀ կառավարության 526-Ն որոշման կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն նիստը համարվում է իրավազոր:

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ ՆԳՆ կարիքների համար լազերային տպիչների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-51 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1-ին չափաբաժնով՝ լազերային տպիչների ձեռքբերման նվազագույն գին առաջարկած մասնակից «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հայտում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում առաջարկվող ապրանքի նկարագրում անհրաժեշտ է հստակեցնել մոդելը և պաշտոնական սպասարկման կենտրոնի հասցեն:

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-51 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությանը տրամադրել մեկ /1/ մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկում կատարելու համար: Վերջինիս կողմից անհամապատասխանությունները շտկվել են:

Մասնակցի կողմից ներկայացված է Հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետով պահանջվող հայտի ապահովումը, այն է՝ 7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 2) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է գնման գնի հինգ տոկոսին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար հայտարարված լազերային տպիչների ձեռքբերման ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-51 ծածկագրով գնման ընթացակարգին ընտրված մասնակից ճանաչել՝ «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությանը:

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	Էյչ Գրուպ ՍՊԸ	64679400 AMD	53899000 AMD	20 %	64678800.00 AMD
1	2	Simsom	64679400 AMD	84679400 AMD	0 %	84679400.00 AMD

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությանը կառաջարկվի կնքել լազերային տպիչների ձեռքբերման գնման պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝
ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ պետի տեղակալ Ա. Թամազյան

Հանձնաժողովի անդամներ՝
ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ ՏՀՍ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Բաբայան

Քարտուղար՝
ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան